

Թէպէտեւ երեսունըվեց, առաւել երկու,
Անոնք կը վերածուին բիւր բիւրաւորներու, միլիոն միլիոնի վրայ,
Երբ պահն է ոգորման, կենաց եւ մահու պայքա՛րը.
Վարժարաններու մէջ, վանքերու ծոցին,
Պմբադրատուններու հերոսական դիմադրական դժերուն վրայ,
Եւ գրչին ծայրը գրադէտին,
Կը բազմապատկուին անհաշիւ բազմապատկումներով,
Ու կը յորդին գետերու պէս,
Կը դահավիժին ինչպէս լեռնէն իջնող երիտասարդ հեղեղը,
Ձի ընդհարման ժամն է, ժա՛մն է իրենց առաքելութեան՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ե՞րբ պիտի հասնի հանգստեան անոնց ժամը,
Ե՞րբ պիտի բոլորուին խարոյկներու շուրջ,
Ե՞րբ պիտի բարձրացնեն վրանները, ձերբադատուին դէնքերէն,
Ձի չկայ զինուոր մը, արձակադէն մը, ահաբեկիչ մը,
Որ յետ մղելու իր պայքարը,
Չըզձայ բարձի մը երանութիւնը, երդիքի մը հովանին.
Ու անոնք տասնըվեց դարերէ ի վեր է որ կ'ոգորին,
Տասնըվեց դարեր՝ արիւնի, հրկիզման,
Տասնըվեց դարեր՝ անհանգրուան դողդոթաներու, խաչելութեանց.
Անո՛նք, հայ ցեղին ընտրեալ յառաջամարտիկները՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ո՛չ. չկայ դադար. ա՛յս է հայուն ճակատագիրը.
Ձահերը միշտ վառ, ջահակիրները միշտ արթուն.
Ձէնքերը երբեք վրաններու տակ, երբե՛ք խարոյկներ,
Ա՛յս է հայուն ճակատագիրը.
Ապրելու համար պայքարի՛լ հարկ է մեղի, զոհարերութի՛ւլ,
Ձի մեղի համար կեանքը ճակատագրուած է ըլլալ արիւն,
Սակայն չկայ արիւն մը՝ որ յաջողի խեղդամահ ընել մեղ,
Չկայ հարուած մը՝ որ խորտակէ մեր մէջքը, հայուն մէ՛ջքը,
Ձի կը հսկեն, տեւականօրէն դէնքի տակ,
Երեսունըվեց ու առաւել երկու պանծալիները,
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Այսպիսի մարտիկներու հետ
Ի՛նչ խրամատներ վարելի չէ գրաւել, նուաճել դանոնք,
Խորտակել ամբարտաւանները, անցնիլ բարձունքէ բարձունք,
Դիտել դարերը՝ երկնի հողմառատ խորութիւններէն,
Դիտել՝ ինչ որ անցեալի մեր փառքն է, պարծանքը,
Դիտել՝ ներկայ դարերէն մեր Ոսկեդարը,
Երբ Ս. Մեսրոպի մտքին աննման զաւակները,
Ասպարէզ կ'իջնէին իրենց է՛ն չքեղ
Ձէնուզարդին այլազանութեամբն ու փողփողումով.
Երէկ կռիւն էր Յոյնին դէմ, Պարսիկին եւ Հռոմին,
Այսօր՝ աշխարհի դէմ միմեկ եւս մեր մինակութեան հետ:

Օ՛ն ուրեմն, քալենք մենք ձեռք ձեռքի եւ սիրտ սրտի,
Ա՛լ կը բաւէ քէնը, մնացեալը,
Ա՛լ կը բաւեն ծուռ նայուածքները, անուղիղ կեցուածքները,
Մենք, միեւնոյն կաղնիին արմատները, բունն ու ճիւղերը.
Միթէ մեր կեանքին դէմ չղաւաճանեցի՞ն միեւնոյն դահապետները,
Միթէ միեւնոյն անճիտման դէմ չի՞ ծառանար
Ս. Մեսրոպի մտքին անտեղիտալի գումարտակը.
Տեսէք, ի՛նչպէս կը յառաջանայ, անցուցած՝ սաղաւարտները,
Մինչ լեռնապարէ լեռնապար, անդունդէ անդունդ,
Կը հնչեն մարտահրաւէր դալարափողերը,
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Ո՛վ Աստուածդ հայուն, պահէ՛ հայութիւնը,
Ո՛վ Աստուածդ Հացեկացիի սուրբ տեսիլքին,
Պահէ՛ հայութիւնը.
Մեր կուրծքերը վէրքերով լի, հասած ենք մինչեւ հոս,
Մեր ամէն քայլն անկում մը եղած է, ապա՝ ամբարձում մը,
Պահէ՛ հայութիւնը.
Ընդմէջ յոյսի, յուսաբեկման եւ վերադարձող յոյսերու,
Տասնըվեց դարեր ապրած ենք ապաւինած մեր Այրուբենին,
Պահէ՛ հայութիւնը.
Ու տե՛ս, դեռ կը շարունակուի երեսունեւութ մարտիկներուն պայքարը՝
Աշխարհի բոլոր ռազմաճակատներուն վրայ:

Միլանոյ, 13 Դեկտ. 1962

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՄԵՍՐՈՊԻԱՆ

1

Մ Ա Յ Ր Ե Ր Ը

Կը բարձրանայ փաղափներէն, գիւղերէն
Հեծֆը կանաչ մայրերուն.
Բողոք դարձած աղաղակները կեանքի
Կը փաթարւին ապագայի անիւին:
Թող զարիւրիւն արքաներ
Որոնց ձեռքին օտար մական կը ծաղկի,
Ու քշնամին կրծէ անյագ մեր շղթան,
Որովհետեւ Հայաստանի մայրերն են
Որ կը կանգնին այս անգամ...

Թող լըսէ գունդն հայկազեան
 Զարհուրանքի կանչն հրգօր.
 Մինչեւ ե՞րբ մեր արգանդին ծիլն ու ծաղիկ
 Հողին ներքեւ անհետի,
 Եւ մինչեւ ե՞րբ հողին երախը վիշապ
 Սփռէ սարսափ ու պատանգ:
 Մենք մայրե՛ր, մենք կ'ուզենք կերտել ապագան.
 Օտար ձայներն օտար լեզուին՝ կը ցամփին
 Մեր շրթներուն ծաղկատի:

Հայրենի հովն ինչո՞ւ սրբէ գրգուելով
 Արծաթ ֆրտինքը մշակին,
 Մինչ օտարին ձեռք պիտ' հնձէ արտերէն
 Յայտն արդար վաստակին:
 Թող փոքորկի մեր հոգին, դառնայ վրէժ ու գայրոյթ
 Ու լեռներէն իջնեն շանքեր պատուհաս
 Հակատագրին դժնէ հարուածը գամելու
 Մեր սրտին դէմ վատոցի,
 Եթէ չըկայ յոյսի, լոյսի վաղորդայն:

2

ԲԱՆԱԿԻՆ ԱՂՕԹՔԸ

Բանակն հայոց կ'աղօթէ...
 Բազկատարած սուրբի պէս.
 Խաչը կողքին՝ վաչէն կ'իյնայ փրկելու
 Եկեղեցին ազգին հետ:

Ազգին համար, կեանքին համար
 Սարսուռ ըլլան, ոչ թէ մրմունջ աղօթքի
 Երգն արտերուն՝ մեր արիւնով ներկւած,
 Ու փուշի պէս խոցեն արտերը խոպան
 Զայն կոխկոտող ներբաններն:

Ազգին համար, կեանքին համար
 Մեր կուրծքին տակ հաւատքի հեւքն առագաստ
 Ծովէ ծով թող տաւառնի
 Ու բուրբն հսկայ բազուկներուն աւերիչ
 Մեր ձայնին մէջ թող լուծուի:

Մենք ենք առատ սերմնացան
 Հայրենական դաշտերուն,
 Մեր սիրտն աղօթք ու կարմիր սէր է անդարձ
 Մարգարէի գալուստին...

3

ԵՐԿՆԷՐ ԵՐԿԻՆ

Երկներ երկին, ու Գողթն առատ մրգաբեր
 Արշալոյսի պէս կը բացուէր
 Թռչուններու երգ նըրագով...
 Հայ գուսաններ, ո՛հ, երգեցէ՛ք
 Եւ երգը ձեր յաւերժանայ անկորուստ
 Օղակիքին մէջը բաղուած...:
 Պիտի գայ օր մը գանձնի գրի յանձնելու
 Խորենացին վեհաշունչ:

Երկներ երկին... Եւ աստղերէն բոցաչուի
 Կը ծարեր վար ֆերքողութիւնն հըրաքել
 Մեր լեռներուն շունչով, գեղով լիններուն:
 Եւ կը յորդէր գինին, փրփուր առ փրփուր
 Ուրախութեան կանչերով,
 Որոնք յետոյ երգին լարով շղթայուած,
 Պիտ' ըլլային յուշարձաններ գեղեցիկ,
 Զուլուած գրչով հանճարին:

Ու ծիրանի փողն ըսկըսաւ դաշներգել
 Երկինքն ի վեր ու աստղերէն
 Ծըծել նեկտար դիւքական.
 Եւ հողերէն մեր փարթամ մտքի գանձեր հանելով
 Կապեց արծուի քեւերուն
 Որպէս հարմանդ իմաստութեան
 Օղակելու վահագներու լայն կուրծքին
 Դիւցազնուի հայրենիքին...

4

ՀԵՐՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Մըռայլ քեւերն ուրուրի
 Փռած է երկրին Սեւն հսկայ...
 Հերմակ գիշեր մ'ալ խոհերուն վրայ արծաթ
 Զարկած է վրան տփնոյ մտքին Մեսրոպի:
 Պայծառ երկինք... աստղերէն վար կ'անձրեւէ
 Անդորրութեան կաթը գով.
 Բայց մեռակեացն իր խղիկին մէջ ամայի
 Հոգիին խոր կը զգայ հրդեհն ըսպառիչ
 Հայրենական օճախին:

Ու սրտին վրայ կ'այրի անցեալ մը ազգի
 Մոլեխ՝, անշունչ աւերակ...

Սակայն հայեացքն իր կը նայի վնասկան
Ապագային հեռաբնակ:
Արցունք կու լայ հատիկ հատիկ կանքեղն իր
Աչքէն բխած ցաւին պէս.
Վերջին կաթիլը կը դառնայ արեգակ
Անոր առջեւ բանալու նոր հորիզոն:

Գիշեր՝ անհուն, գիշեր՝ պատանք երկունքի...
Միտք մ'առանձին կը տագնապի, կը սպառի
Նոր կեանքին դէմ յանդիման:
Տենչանքն, աւա՛ղ, ամուլ փորձեր կը բըլին
Տալու զուարթ յարուրին
Իր փայփայած երազին:

Լուսնէն ինկած շեղք մը լոյսի բարերար
Առանձնոցին մէջ նըսեմ,
Կ'ըլլայ հոգին զբոլող ներմակ գաղափար,
Ու սիրտն անոր կը կապէ
Յոյսի հըզօր արեւին:

5

ՈՉ Ի ՔՈՒՆ ԵՐԱՁ ԵՒ ՈՉ ՅԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԻԼ, ԱՅԼ Ի ՍՐՏԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

Ոչ երազ էր եւ ոչ տեսիլ յարարքուն,
Այլ գիւտ՝ հրաշքի պէս չֆնաղ
Ծընունդն հայկեան տառերուն:
Հոգին անմահ Մեսրոպի
Որպէս հրքիռ, աստուածավառ ատրուշան,
Կամ արուսեակ մը լուսաշիթ երկնքի
Կը բաշխէր հուր նոր գարնան:

Մտքի տագնապն յորդահոսան գերդ մրրիկ,
Եւ սրտին ծովն ալեծովի,
Լին մ'էր հիմա անդորրիկ:
Ու հրդեհուած ճակատէն,
Ուր ըստուերներ կը ծըփային խորհուրդի,
Գիրերն հիմա բոց աստղերու պէս կ'իջնեն
Ակօսին վրայ հայրենի:

Տեսէ՛ք, տեսէ՛ք ինչպէս ծաղկեր են տառերն
Այրող սրտին վրայ Սուրբին՝
Որպէս երկնի բոց վարդեր:
Տեսէ՛ք ի՛նչպէս կը փայլին

Հրեշտակներու աչքերուն պէս հըրավառ,
Ու կը նային նոր դարերու կամարին,
Անդունդին վրայ նետուած լար:

Հոգւոյն վըրայ, տեսէ՛ք էջեր մարմարեայ
Գրուած մատով հանճարին,
Լոյսի շիթե՛ր սատափեայ:
Հորիզոնէն կը փախչի
Խաւարին հետ ճուրում ռոտին հայութեան.
Ու ջրվէժներ աստուածային անձրեւի
Կը լըւան հողն հայկական:

Ի՛նչ յուզումով հատիկ հատիկ կը հեգէր
«Այր բեն գիւմ դա»ն հրաշակերտ
Վարպետն հայոց լուսահեր:
Ի՛նչ մեղրածոր շրթունքներ,
Օծուած սիրով եւ սրբութեամբ պատարուն,
Որ գրկեցին հայ լեզուն կամ հայ սրտեր
Բաշխելով լոյս, բարութիւն:

6

ՓԱՌՔԻ ՃԱՄԲԱՆ

Բացէ՛ք դռներն Արտաշատի
Կու գայ Մեսրոպն յաղթական,
Աչքերուն մէջ հուր ծաղկատի,
Եւ սիրտը բոց հրաշուշան:

Կու գա՛յ ճակատը պըսակուած
Դափնիներով անթառամ,
Մըտածումն իր ջահ երկնամած
Երկնքի վրայ հայկական:

Վարդ կապեցէ՛ք կամար կամար
Անոր փառքի ճամբուն վրայ.
Եւ գուսաններն արծաթալար
Թող զարնեն փող եղեգնեայ:

Սափորներու մէջ սատափի
Ամփոփեցէ՛ք գուրգուրոտ
Կանքեղներուն իւր հայրենի՝
Հակտին բըրտինքն արեւոտ:

Լուցէ՛ք ջահերը տանարին...
Գոհութեան երգն աննըման

Թող բարձրանայ դէպի երկին,
Այսօր ոտնն է Հայութեան:

Ու ծիրանի փողը գարնան
Թող պատգամէ աւետիս
Հայոց երկրին բագմագունեան՝
Շունչով, տառով լուսագիծ:

Զեռփի մատնան հայ տառերու,
Հրքիռ հոգւոյն լայն ալեքէն,
Որպէս մականն արքաներու
Կը բանայ դուռն ոսկեղէն:

Ու դէմքն հրգօր ապագայի
Իր մտքին պէս ընդարձակ՝
Սահմանափար մ'է անցեալի
Նոր արեւով լուսապսակ:

Ալիքներու պէս փրշրւած
Մաշտոցի միտքը բիւրեղ
Կը ծաւալի լայնատարած,
Ծովանալով յորդագեղ:

Տանիքներէն երբոր կախուին
Աստղերն օծուն կապոյտով,
Ու նըրագներն երբ վառուին
Տուներու մէջ հեւալով՝

Մըքընշաղին ստուերներէն
Կը փայլփրլին լոյս տառեր:

7

ՃԱՆՍԶԵԼ ԶԻՄՍՏՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԻՐՍՏ ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ...

Մարգարտաշար ակունքներ
Պեղուած մտքի հանքերէն
Եւ հաննարի ցոլովն օծուած սրբութիւն,
Էջֆ մ'արեւի ըստեղծագործ ու բեղուն
Մագաղաթին ալեհեր,
Հայկեան տառերն ոսկեղէն:

Առած մարմին հրաշագեղ
Շունչով սուրբին կենսատու,

Արմենական տառեր, ոսկի հաւագայք,
Աղամանդիկ փայլով կարմիր հէֆիաք,
Երագի փունջ մ'է լուսեղ
Եւ խօսուն հիւսֆ մ'աստղերու:

Անդաստաններն ոռոգող
Աստուածային յորդ անձրեւ,
Շատրբունի ցայտֆ ժպտաղէմ ու պայծառ,
Կայլակ մտքի, հայրենական դու բարբառ,
Լոյսի հարմանդ տող առ տող
Համերգ սրտի մշտատեւ:...

Դաշնակութիւն ազգային
Ժիր հրաշմով մատներուն
Արուստագէտ մարգարէին մոգութեամբ,
Դարերուն հետ մրցող պատուար ապրտամբ,
Հայրենի տառ լուսածին
Եւ հայրենի նոխարին:

Հայրենի գետ հեգասահ
Դաշնաբաւալ գրնացով,
Սողոմոնի իմաստութեան տանարին
Յատակն ի վար խորհրդաւոր ու մըքին,
Զերդ քափանցիկ շափիւղայ
Ոսկեփրփուր ալիքով:

Ճանաչել զիմաստութիւն եւ ըզխրատ...
Քանդակուած բիւրեղային յուշարձան
Հովուի սրինգ, քնարի լար մեղրակաք:

8

ՇՆՁՈՂ ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

Աչքերուս դէմ, եւ սրտիս վրայ կը շնչեն
Մագաղաթներ դարերու.
Զեռփերս անոնց ներմակ մարմինն հրաշքէն
Կ'առնեն օծումն արեւու:

Ո՛հ, ինչ կեանքեր, անհուն շողով լուսաւոր
Արիւնած են տփնելով,
Ու ի՞նչ գաղտնի իմաստութեամբ բեռնաւոր
Գլծած են հոն սրտի ծով:

Մերսոյ կ'ապրի անոնց բոլոր էջերուն,
Մօր մը աչքով գորովի,

իր սրտէն հուր, եւ հանճարէն լոյս ու գոյն
Առին տառերն այդ ոսկի:

Մագաղաթի խորհրդաւոր անտառէն
Եւ կը փայլեմ գգուշաւոր.
Վարդեր, հաւքեր ու մարդկութիւն նըկարէն
Կան ծալքերուն մէջ բոլոր:

Անոնք կ'ապրին ու կը շնչեն կենսունակ
Որպէս գանձնի ծաղկոյններ,
Անոնց ծոցէն կ'ստանան բուսեր շողարձակ
Խուլ ժամանակն ու մարդեր:

Զարկաւ սրտէն՝ անգութ, անսիրտ քշնամին
Ու խորտակեց հայութիւնն.
Կիսեց գանձեր գեղանրկար արուեստին,
Բայց հոգին դեռ կայ կանգուն:

Մեսրոպեան շունչն է հրաշքին վառարան
Իր վառվռուն կայծերով.
Անոր շունչին շունչովն է մեծ յաւիտեան,
Ու աւերին դէմ ապահով:

Դարերն աղօթք եղան, հոգի, պաշտամունք,
Երկաթագիր տառերով.
Փառքը փառքին զօղուեցաւ գերդ նոր ակունք,
Արքայական մականով:

Անին հիմա փլատակին տակ կը հեծէ,
Ախորեանով արցունքոտ,
Գաղտնի ճամբայ մը սրտի գայն կը կապէ
Մեր յոյսերուն արեւոտ:

Լոյսի ծարաւ մագաղաթներն հոգապատ
Անի կամ Դըւինի
Օր մը պիտի շնչեն, տաքնան ըզձակաթ՝
Հուրով, սիրով հայրենի:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

• Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն •

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ, Գրեց՝ Եղիվարդ: Երու-
սաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1962, էջ
112:

«Մագաղաթին մեղրամոմէ» եւ «խոր-
տակման գիշերներ» էն վերջ՝ Եղիվարդ
բաւական ժամանակ լռեց. եւ ահա Սուրբ
Մեսրոպի 1600ամեակը պատճառ կը դառ-
նայ որ երկարաշունչ հատոր մը նուիրէ
այդ սքանչելագործ սուրբին, հայ դրա-
կանութեան մեծ առաջնորդին:

Եղիվարդ որոշ դիտաւորութիւն ունե-
ցեր է էփովիէ մը ստեղծել, մտաւորակա-
նի մը գիւցաղներգակ կեանքը ներկայա-
ցնելով հանրութեան:

Նախերգով մը կը սկսի. ունի ինը բա-
ժանմունք եւ վերջերգ մը. այս ամէնը
ամփոփած է 112 էջերու մէջ:

Իր նախերգը ոգեկոչում մըն է, ուղ-
ղուած Օշականի անցիկ մեռելային, պա-
ղատանք մը՝ որ գայ հեռուներէն հանդեր-
ձելու բարբառն Հայուն, եւ հայութիւնը
պաշտպանել ընդդէմ Յոյնին ու Պարսիկին
մեր օրերուն: Այնուհետեւ կը սկսի Մես-
րոպի վարքը դրել բանաստեղծական տո-
ղերով, Հացեկացիին մանկութիւնը, գաղ-
ղերով, Հացեկացիին մանկութիւնը, գաղ-
թը օտար երկիր եւ վերադարձը, երբ
Բիզանդիոնէն երկիր կու գար. եւ ահա
գիւնադարէն է, լքած է արքունիք եւ
պատիւ՝ քաշուած է մենութեան քարայ-
րը: Մենք կը հասնինք Եղիվարդի Ե.
հանդերուսնը. Հացեկացին Ս. Սահակի
մօտ է Կանքեղ վառեալ, ջինջ աշտանակ
Հայ աշխարհին: Ս. Մեսրոպ կը ճամբոր-
դէ օտար երկիր՝ հայ տառերը գտնելու,
յաղթական կը վերադառնայ՝ ինչպէս
Մովսէս Սինա լեռնէն. եւ կը կերտէ Հա-
յաստանի մէջ հայ հոգիին եւ հայ լեզուին
վերջնական յաղթանակը Օտարին խուժ
ու խեցքեկ բարբառին տեղ:

Վերջերգը Ս. Մեսրոպին ուղղուած ձօն
մըն է 1600ամեակին առթիւ:
Զեմ գիտեր ինչո՞ւ այս հատորը ար-

ուեստակեալ գրութեան մը տպաւորու-
թիւնը ձգեց. արուեստ կայ, խորք չկայ,
անթիւ ծաղիկներ՝ առանց բոյրի. փոք-
րիկ պատկերներ, որոնք խոր իմաստ մը
չունին: Կարգաւորվ ամբողջ հատորը՝ ըն-
թերցողը ծաղիկէ ծաղիկ կ'անցնի՝ առանց
տպաւորուելու, եւ ոչինչ կը մնայ իր
մտքին մէջ:

Երկարաշունչ ներբողեան մըն է, զոր
կարելի էր արձակ ալ գրել, ու թերեւս
աւելի յաջող ըլլար: Մեծ բաներ ըսելու
ճիշդ մը եւ աճապարանք մը կայ իր ըն-
թացքին մէջ, զոր չէ կարելի մերձեցնել
Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ»ին եւ ոչ
Պարոյր Սեւակի «Անլոյի գանգակա-
ւոր» տաք ու խոնարհ մատենին: Սե-
ւակ՝ Կոմիտաս վարդապետի վարքը գը-
րած է. Եղիվարդ՝ Ս. Մեսրոպին վարքը.
գրեթէ նոյն նիւթը շօշափած են երկուքն
ալ. բայց Սեւակ պարզ է, անկեղծ եւ ըզ-
բայուն, առանց մեծ էջեր լեցնելու յա-
ւակնութեան. անոր մէջ արեւ կայ, չը-
ւակնութեան: Եղիվարդ խճո-
նորէր ու թարմութիւն: Եղիվարդ խճո-
ղած է իր էջերը բառերու եւ դարձուածք-
ներու անհարկի զարդերով: Յոգնութիւն
կը պատճառէ եւ ոչ հրապոյր. ընթերցո-
ղը խաղաղութեան պէտք կը զգայ եւ ոչ
թէ չնչահեղձ վազելու:

Տաղաչափական արուեստը, ոճը եւ լե-
զուն մասնաւոր թերութիւններ չունին.
սակայն լաւագոյն է ետ կենալ քանի մը
մղումաւ բառերէ, որոնք կրօնական խոր-
հրդապաշտութիւն չեն տար, ինչպէս
ակունքիտ, մոնագ, այլուրային, եւ այլն:
Ունի բացատրութիւններ՝ որոնք ինքնա-
տիպ չեն կրնար կոչուիլ, նիւրաղներով ի-
րենց մտքին:

Ամբողջ հատորը առանց յանգի քեր-
թուածներ ունի, հազիւ պատահական
կերպով կարելի է երբեմն յանգ գտնել:

Վերջերգին մէջ նշանակալից տողեր
ունի՝ ուր յետ գանդատելու թէ մոռցուած
է հայ լեզուն, Եղիվարդ կ'անդրադառնայ
Երուսաղէմի վերջին պայքարներուն, ան-
շուշտ ակնարկելով նաեւ կաթողիկոսա-
կան երկու աթոռներու վէճերուն: